ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-4/15-1

ք. Երևան 04.11.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ Գնորդ) մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Սոնիկ Երիցյանը (այսուհետ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 15547140 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար մեկ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[20]

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Սոնիկ Երիցյան
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Խաղաղ Դոնի 23-218
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570051442640100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 23238517
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԵՐԻՑՅԱՆ

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-4/15-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման առարկան	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիր
5	սանտիմետրային ժապավեններ (Սանտիմետրային մետաղական ժապավեն)	ABS	ABS	ՉԺՀ	Երկարությունը - 5մ Լայնությունը - 25մմ (+/-1մմ) Նյութը - մետաղ
12	ոտնթեռի սայլակներ (Հիդրավլիկ սայլակ պատառաքաղով)	Guangdong	Guangdong Gongyo	ՉԺՀ	Բեռնատարողությունը 2.5տ. Պատառաքաղի երկարությունը -1100-1300մմ Բեռի բարձրացումը պատառաքաղով -ոչ պակաս 200մմ Բռնակի բարձրությունը - 1100մմ Անիվ/անվակ քանակը- 2/4 հատ Անիվ/անվակ տրամագիծը- 200/80 մմ
15	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (30մմ))	INGCO	INGCO	ՉԺՀ	երկարությունը 250մմ բացվածքը մինչև 30մմ քրոմապատված
16	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (20մմ))	INGCO	INGCO	ՉԺՀ	երկարությունը 150մմ բացվածքը մինչև 20մմ քրոմապատված
17	գործիքներ փոխադրամիջոցների համար (Փոփոխվող գլխիկների հավաքածու)	INGCO	INGCO	ՉԺՀ	Քանակը հավաքածուի մեջ - ոչ պակաս 24 հատ տարբեր չափերի չափերը 8-32մմ
22	մետաղի շաղափման հաստոցներ (Շաղափման հաստոց)	Sturm	Sturm	ՌԴ	Առավելագույն հզորությունը - 450Վտ Պտույտների արագությունը - 280-2350 պտ/րոպ Արագությունների քանակը - 9 Հոսանքի սնուցումը - 220/50 Վ/Հց Տեսակը - ուղղահայաց շաղափման հաստոց
23	մետաղի շաղափման հաստոցներ (Անհարված շաղափիչ)	TOTAL	TOTAL	ՉԺՀ	Տեսակը – 13/650 Հաղորդակի տեսակը - էլեկտրական Պտույտների արագությունը - 0-2800 պտ/րոպ Արագությունների քանակը -1 Պողպատի առավելագույն շաղափման տրամագիծը - 13մմ Փայտի առավելագույն շաղափման տրամագիծը - 30 մմ Իլի ծայրը - պարուրակ 1/2"-20UNF տրամագիծը 1,5-13մմ Հոսանքի սնուցումը - 220/50 Վ/Հց Սպառող հզորությունը - 3 Ա Շարժիչի հզորությունը - 0.65 կՎտ Տեսակը – Ժ-13/650
26	եռակցման սարքեր (Ինվերտորային զոդման սարք)	TOTAL	TOTAL	ՉԺՀ	Զոդման հոսանքը MMA - 10-250Ա Սնուցման ցանցը - 140-260Վ Ելքային հոսանքի տեսակը - հաստատուն Տեսակը –TW12501 250A
27	եռակցման ոչ էլեկտրական սարքեր (Զոդման դիմակ)	TOTAL	TOTAL	ՉԺՀ	Տեսադաշտը (լայնxբարձր.)- 92x42մմ Հաստատուն պաշտպանում DC/AC ուլտր.ֆի./ինֆ.կարմիր-16DIN Հոսանքի աղբյուրը - ֆոտոէլեմենտ+ալկալային մարտկոց- 2հատ (AAA) Շահագործման ջերմաստիճանը - -5-ից+55^{0}C Չափսերը (եր.xլայն.xբարձ.) - 310x230x210մմ
28	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Մամլակ փականագործական)	Sturm	Sturm	ՌԴ	Տեսակը - պտուտակային Շուրթերի լայնությունը - 150մմ
29	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Պտուտակահանի հավաքածու)	TOTAL	TOTAL	ՉԺՀ	նյութը լիգերացված պողպատից Քանակը հավաքածուի մեջ - ոչ պակաս 7հատ, հարթ և խաչաձև, չափսերը 2.0-10.0մմ Երկարությունը - ոչ պակաս 200մմ
33	հեղուկացիր ատրճանակներ (Հեղուկացիր)	TOTAL	TOTAL	ՉԺՀ	տեսակը - HVLP ծայրափողակի տրամաչափը - 1,7-1,8մմ տարողությունը - ոչ պակաս 600 մլ

					օդի ճնշման կարգավորիչ - առկա է
34	հղկող սարքեր (Հղկիչ մեքենա (անկյունային))	TOTAL	TOTAL	ՀԺՀ	Հաղորդակի տեսակը - էլեկտրական Պտույտների արագությունը - 8000 պտ/րոպ Սկավառակի նստեցման անցքը - 22.2 մմ Հղկասկավառակի չափսը - 180 մմ Իլի ծայրը - պարուրակ M14 Հոսանքի սնուցումը - 220/50 Վ/Հց Սպառող հոսանքը - 8.2 Ա Սպառող հզորությունը - 1.8 կՎտ Քաշը - 4.5 կգ
35	հղկող սարքեր (Հղկիչ մեքենա (սեղանի))	ИНТЕРСКОЛ	ИНТЕРСКОЛ	ՌԴ	Պտույտների արագությունը - 2950 պտ/րոպ Սկավառակի նստեցման անցքը - 12.7 մմ Հղկասկավառակի չափսը - 150*40/150*20 մմ Հոսանքի սնուցումը - 220/50 Վ/Հց Սպառող հզորությունը - 0.25 կՎտ Քաշը - 7.8 կգ
39	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (230x22x2.5))	Luga	Лужский абразивный завод	ՌԴ	GOUS 21963-2002, ИСО 603-15-99 արտաքին տրամագիծը 230մմ ներքին տրամագիծը 22մմ հաստությունը 2.5մմ
40	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (180x22x1.6))	Luga	Лужский абразивный завод	ՌԴ	GOUS 21963-2002, ИСО 603-15-99 արտաքին տրամագիծը 180մմ ներքին տրամագիծը 22մմ հաստությունը 1,6մմ
60	պարոնիտ (Պարոնիտ (1մմ))	ВАТИ-АВТО	ООО «ВАТИ-АВТО»	ՌԴ	GOUS 481-80 հաստությունը 1մմ մեկ կտորի լիստի չափսերը ոչ պակաս 1500x3000մմ Մակնիշը ՊՄԲ
61	պարոնիտ (Պարոնիտ (1.5մմ))	ВАТИ-АВТО	ООО «ВАТИ-АВТО»	ՌԴ	GOUS 481-80 հաստությունը 1.5մմ մեկ կտորի լիստի չափսերը ոչ պակաս 1500x3000մմ մակնիշը ՊՄԲ
62	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L10-6Ն))	Труд	ЗАО «Завод Труд»	ՌԴ	GOUS 28191-89 տեսակը 1Л10-6Н ձգման աշխատանքային տրամագիծը 10մմ ցինկապատ
63	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L14-6Ն))	Труд	ЗАО «Завод Труд»	ՌԴ	GOUS 28191-89 տեսակը 1Л14-6Н ձգման աշխատանքային տրամագիծը 14մմ ցինկապատ
64	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L18-6Ն))	Труд	ЗАО «Завод Труд»	ՌԴ	GOUS 28191-89 տեսակը 1Л18-6Н ձգման աշխատանքային տրամագիծը 18մմ ցինկապատ
65	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L25-6Ն))	Труд	ЗАО «Завод Труд»	ՌԴ	GOUS 28191-89 տեսակը 1Л25-6Н ձգման աշխատանքային տրամագիծը 25մմ ցինկապատ
66	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L31-6Ն))	Труд	ЗАО «Завод Труд»	ՌԴ	GOUS 28191-89 տեսակը 1Л31-6Н ձգման աշխատանքային տրամագիծը 31մմ ցինկապատ
82	աքցաններ (Կծաքցան)	TOTAL	TOTAL	ՀԺՀ	երկարությունը 160մմ ցինկապատված բերանը և կտրող եզրերը ջերմամշակված բռնակը պլաստմասե
86	հարթաշուրթ (Հարթաշուրթ)	INGCO	INGCO	ՀԺՀ	երկարությունը 180մմ ցինկապատված բերանը և կտրող եզրերը ջերմամշակված բռնակները մեկուսիչ թաղանթով

Ծանոթություն
- Ցանկում նշված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
- Վերը նշված ցանկում ներառված ապրանքները չեն հանդիսանում հիմնական միջոց:
- Ապրանքները պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 84029 (Եղվարդ) զորամաս, ք. Եղվարդ Արտադրական կենտրոն, հեռ 094-347479:
- Համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը անհրաժեշտ է:
- Առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից առաջարկված ապրանքի ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը անհրաժեշտ է:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Հ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը
5	սանտիմետրային ժապավեններ (Սանտիմետրային մետաղական ժապավեն)	հատ	40	945	37800	Ապրանքի մատակարարումը կիրականացվի 2019թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված<Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները:
12	ուղեբեռի սայլակներ (Հիդրավլիկ սայլակ պատառաքաղով)	հատ	4	162500	650000	
15	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (30մմ))	հատ	60	2780	166800	
16	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (20մմ))	հատ	60	1380	82800	
17	գործիքներ փոխադրամիջոցների համար (Փոփոխվող գլխիկների հավաքածու)	հատ	60	28250	1695000	
22	մետաղի շաղափման հաստոցներ (Շաղափման հաստոց)	հատ	25	78000	1950000	
23	մետաղի շաղափման հաստոցներ (Անհարված շաղափիչ)	հատ	25	19800	495000	
26	եռակցման սարքեր (Ինվերտորային զողման սարք)	հատ	25	92400	2310000	
27	եռակցման ոչ էլեկտրական սարքեր (Զողման դիմակ)	հատ	25	18796.80	469920	
28	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Մամլակ փականագործական)	հատ	25	58000	1450000	
29	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Պտուտակահանի հավաքածու)	հատ	60	3666.67	220000	
33	հեղուկացիր ատրճանակներ (Հեղուկացիր)	հատ	25	13876.80	346920	
34	հոկող սարքեր (Հոկիչ մեքենա (անկյունային))	հատ	25	48000	1200000	
35	հոկող սարքեր (Հոկիչ մեքենա (սեղանի))	հատ	25	62000	1550000	
39	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (230x22x2.5))	հատ	300	880	264000	
40	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (180x22x1.6))	հատ	300	590	177000	
60	պարոնիտ (Պարոնիտ (1մմ))	կգ.	200	5880	1176000	
61	պարոնիտ (Պարոնիտ (1.5մմ))	կգ.	150	4880	732000	
62	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L10-6Ն))	հատ	650	96.92	63000	
63	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L14-6Ն))	հատ	700	96.86	67800	
64	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L18-6Ն))	հատ	700	96.86	67800	
65	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L25-6Ն))	հատ	700	108	75600	
66	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L31-6Ն))	հատ	550	114	62700	
82	աքցաններ (Կծաքցան)	հատ	60	1780	106800	
86	հարթաշուրթ (Հարթաշուրթ)	հատ	60	2170	130200	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Սեդրակ Երիցյան

Տեսրեն

Ս. ԵՐԻՑՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-4/15-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	
5	սանտիմետրային ժապավեններ (Սանտիմետրային մետաղական ժապավեն)	30192200/501	Նախատեսվում է ֆինանսավորել պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ կնքվելիք համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով:
12	ուղեբեռի սայլակներ (Հիդրավլիկ սայլակ պատառաքաղով)	34911120/501	
15	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (30մմ))	38541900/501	
16	գործիքներ փոխադրամիջոցների համար (Բացովի դարձակ (20մմ))	38541900/502	
17	գործիքներ փոխադրամիջոցների համար (Փոփոխվող գլխիկների հավաքածու)	38541900/503	
22	մետաղի շաղափման հաստոցներ (Շաղափման հաստոց)	42631170/503	
23	մետաղի շաղափման հաստոցներ (Անհարված շաղափիչ)	42631170/504	
26	եռակցման սարքեր (Ինվերտորային զոդման սարք)	42661300/502	
27	եռակցման ոչ էլեկտրական սարքեր (Զոդման դիմակ)	42661500/511	
28	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Մամյակ փականագործական)	42671150/505	
29	մետաղի մշակման հաստոցների մասեր և պարագաներ (Պտուտակահանի հավաքածու)	42671150/506	
33	հեղուկացիր ատրճանակներ (Հեղուկացիր)	42921240/502	
34	հղկող սարքեր (Հղկիչ մեքենա (անկյունային))	43411500/503	
35	հղկող սարքեր (Հղկիչ մեքենա (սեղանի))	43411500/504	
39	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (230x22x2.5))	44112730/503	
40	կտրող սկավառակ (Կտրող սկավառակ մետաղի համար (180x22x1.6))	44112730/504	
60	պարոնիտ (Պարոնիտ (1մմ))	44191800/501	
61	պարոնիտ (Պարոնիտ (1.5մմ))	44191800/502	
62	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L10-6Ն))	44311151/501	
63	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L14-6Ն))	44311151/502	
64	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L18-6Ն))	44311151/503	
65	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L25-6Ն))	44311151/504	
66	մետաղական բազմանգամյա օգտագործման ամրակապեր (Խամուտ (1L31-6Ն))	44311151/505	
82	ագցաններ (Կծաքցան)	44511240/503	
86	հարթաշուրթ (Հարթաշուրթ)	44511700/501	

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Սոնիկ Երիցյան

Ս. ԵՐԻՑՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-4/15-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ՝	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-4/15-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն